# ՕՔՍԵՋԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Տարեկան հաշվետվություն 2023

# ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՕքսԵՋենը շահերի պաշտպանության և զարգացման հիմնադրամ է, որն առաջնորդվում է աղքատությունից և տառապանքից զերծ Հայաստանի իր տեսլականով, որտեղ կանայք և տղամարդիկ կարող են իրացնել իրենց իրավունքները և մասնակցել իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործընթացներում:

ՕքսԵՋենը հիմնադրվել է Օքսֆամ Մեծ Բրիտանիա միջազգային կազմակերպության կողմից 2015 թ-ին, որպես տեղական կազմակերպություն և ռազմավարական նպատակներն իրագործելու ընթացքում հիմնվում է Օքսֆամի հայաստանյան գրասենյակի ավելի քան 20 տարիների փորձառության վրա:

# ՄԵՐ ՄԱՍԻՆ

**ՕքսԵՋենի անվան հիմքում Օքսֆամն է (Ox), գենդերային հավասարությունը (G) և երիտասարդների իրավազորումը (Y):**

- Մենք ցանկանում ենք արդարություն Հայաստանում
- Մենք ստեղծում ենք գործընկերություն և իրականացնում ենք շահերի պաշտպանություն համակարգային փոփոխությունների համար
- Մենք ստեղծում ենք հնարավորություններ և հզորացնում ենք կանանց և երիտասարդներին՝ դառնալու կարևոր փոփոխությունների մի մասը՝ կառուցելու այսօրվա երջանիկ ապագան

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գենդերային հավասարություն

Երիտասարդների իրավազորում

Հաշվետու կառավարում

Տնտեսական արդարություն

Դիմակայանության բարձրացում և մարդասիրական օգնություն

# Ծրագրեր 2023

ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի զորացում՝ հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության

Բռնի տեղահանված կանանց և աղջիկների համար ապահով տարածքների ստեղծում Հայաստանում

Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ Տավուշի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում բնակեցված անձանց

Կանանց մասնակցության խթանում անվտանգության և խաղաղության գործընթացներում

Խթանել կանանց մասնակցությունը Հայաստանում խաղաղությանն ու անվտանգությանն ուղղված գործընթացներում. 2.0

Մարդասիրական օգնություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ Տավուշի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում բնակեցված անձանց

Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում

Աշխատաշուկայում կանանց մասնակցության խթանում

# ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի հզորացում՝ հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության

- Աշխատանքային և սոցիալական իրավունքների քաղաքականությունների մշակման բազմաշահակից ցանց «Քաղաքացու ձայն և նախաձեռնություն»
- Կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության աշխատանքային խումբ
- Փոխըմբռնման հուշագիր Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ
- **8** բազմակողմանի հետազոտություն
- **6** առաջարկությունների փաթեթ
- **6** ընդունված առաջարկություն Աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2022-2026 ռազմավարության շուրջ
- **500** վերանայված գործ աշխատանքային իրավունքների խախտման հիմքով
- **5** քաղաքականության փաստաթուղթ և **2** հետազոտության համառոտագիր

- Աշխատանքային օրենսգրքի առաջարկությունների **29%**-ը ընդունվել է
- Կարողությունների զարգացման դասընթաց **34** լրագրողի համար
- **108** հոդված և հետաքննություն աշխատանքային իրավունքների խախտումների շուրջ
- Աշխատանքային իրավունքների խախտման **39** գործերով իրավական աջակցություն
- Աշխատանքային իրավունքների վերաբերյալ **4** հանրային քննարկում
- Աշխատանքային իրավունքների **11** աշխատարան **204** երիտասարդի համար
- Տեղեկատվական հանդիպումներ մարզերի **173** մասնակցի համար
- **2** աշխատարան արհմիությունների վերաբերյալ **33** ՔՀԿ ներկայացուցչի և պետական պաշտոնյայի համար
- Կարողությունների զարգացման դասընթացներ արհմիությունների **82** ներկայացուցչի համար
- **6** փորձքասթ աշխատանքային իրավունքների վերաբերյալ

# Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում

- « **100** տարի անց» ներկայացումը Տավուշի դպրոցականների մասնակցությամբ
- Լրագրության բաժինների **40** ուսանողի զգայնությունը բարձրացվել է պտղի սեռով այմանավորված խտրական ընտրության վերաբերյալ
- Պտղի սեռով այմանավորված խտրական ընտրության վերաբերյալ կրթական մոդուլ և դասընթացի ուղեցույց բուժաշխատողների համար
- Դասընթացավարների **4-օրյա** վերապատրաստում Երևանի և **4** մարզերի **21** բուժաշխատողի համար
- **2** բազմաշահակից խորհրդապահական հանդիպում ՊՍԽԸ Գործողությունների ազգային պլանի շուրջ

# Խթանել կանանց մասնակցությունը Հայաստանում խաղաղությանն ու անվտանգությանն ուղղված գործընթացներում. 2.0

- **3** մարզային ցանց՝ Սյունիքում, Վայոց Ձորում և Տավուշում
- Կարողությունների զարգացման միջոցառումներ ցանցերի **22** մասնակցի համար
- **3** իրազեկման տեղական սեմինար **1325** բանաձևի և ԳԱԾ տեղայնացման վերաբերյալ **3** համայնքում ՏԻՄ **52** անդամի համար
- Հետազոտություն՝ Հայաստանում խաղաղության գործընթացներում կանանց մասնակցության հեռանկարների վերաբերյալ

# Աշխատաշուկայում կանանց մասնակցության խթանում

- **60** կնոջ ներառող ԱԻԴԱ ցանցը նախաձեռնել է ֆեյսբուքյան էջ, որում ներկայացվում և քննարկվում են աշխատանքյաին իրավունքներին առնչվող հարցեր
- **6 երկօրյա** սեմինար՝ փափուկ հմտությունների, ցանցերի ձևավորման, ջատագովության ու առաջնորդության վերաբերյալ և **1 եռօրյա** ռազմավարական պլանավորման հանդիպում
- ashkhatogh.am կայք, որը ներառում է աշխատանքային իրավունքների վերաբերյալ չատբոտ, հաճախ տրվող հարցեր և առցանց դասընթաց
- Tech Ladies Hackathon՝ անդրադառնալու կրթական բացերին և խթանելու կանանց ներգրավումը այն ոլորտներում, որոնցում ավանդաբար գերակշռել են տղամարդիկ՝ կենտրոնանալով գենդերային հավասարության և աշխատանքային իրավունքների վրա և ներգրավելով **14-20** տարեկան երիտասարդ աղջիկների՝ ավագ դպրոցներից, միջին մասնագիտական հաստատություններից և համալսարաններից
- **2 մեկօրյա** քաղաքականության մշակման սեմինարներ՝ միջին մասնագիտական հաստատությունների, իրավապաշտպան կազմակերպությունների, պետական կառույցների, ԱԺ, արհմիությունների և այլ շահակից կառույցների **43** մասնակիցի համար

- **3 մեկօրյա** ֆոկուսխմբային քննարկում **3** միջին մասնագիտական հաստատություններում **68** մասնակցով

- Միջին մասնագիտական հաստատություններում և աշխատաշուկայում գենդերային խտրականությանն անդրադարձող քաղաքականության փաստաթուղթ

- **2 երկօրյա** ինտերակտիվ աշխատարան՝ **30** մասնակցի համար՝ իրավազորելու երիտասարդ կանանց մուտք գործելու ՏՏ ոլորտ

- 4 երկօրյա դասընթաց՝ աշխատավայրում գենդերային հավասարության խնդիրների վերաբերյալ՝ տարբեր մասնագիտություններ և փորձառություն ունեցող **80** կնոջ համար

- **1 եռօրյա** առաջնորդության սեմինար Վանաձորում՝ տարբեր ոլորտների մասնակիցների, ներառյալ՝ 15 ուսանողի համար:

- **1 եռօրյա** դասընթաց՝ **21** մասնակիցի համար՝ անդրադառնալու աշխատավայրի մշակույթին, բարելավելու հաղորդակցությունը արհմիությունների, ՄՌԿ մասնագետների և գործատուների ներկայացուցիչների միջև

- Աշխատանքային իրավունքների վերաբերյալ սոցմեդիա արշավ՝ ներգրավելով **40,000** օգտատիրոջ

- **2** իրազեկման սեմինար Գյումրիում և Վանաձորում՝ համայնքներում կանանց աշխատանքային իրավունքների վիճակը բարելավելու և տեղական նախաձեռնությունները խրախուսելու համար

# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- Կանանց և աղջիկների ապահով տարածքներ՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերում, որտեղ ԼՂ-ից բռնի տեղահանված կանայք և աղջիկները հնարավորություն ունեն սոցիալականացվելու, ներառվելու և զարգացնելու իրենց հմտությունները, գտնելու ապահովություն և պաշտպանություն մարգինալացումից և բռնությունից

- Ոչ պարենային փաթեթներ ԼՂ-ից բռնի տեղահանված **3000** անձի համար, ներառյալ՝ կանանց կողմից ղեկավարվող և բազմազավակ ընտանիքներ

# ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-Ն ՀԱՆՈՒՆ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎԱԶՈՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- **5** ենթադրամաշնորհային ծրագրեր, որոնք անդրադառնում են գենդերային խտրականության արատավոր դրսևորումներին
- Աջակցության ծառայություններ՝ գենդերային բռնություն  վերապրած **1,374** անձի, ներառյալ՝ **701** կին և **673** երեխա
- **4** կլոր սեղան քննարկում ՔՀԿ ներկայացուցիչների և որոշում կայացնողների հետ՝ բարելավելու գենդերային բռնության վերաբերյալ քաղաքականությունների և իրավական շրջանակը
- **8** ջատագովության միջոցառում ընտանեկան բռնության դեմ կոալիցիայի **11** անդամ կազմակերպության **23** ներկայացուցչի համար
- **5** մարզային հանդիպում՝ խթանելու կառուցողական երկխոսությունը և համագործակցությունը առանցքային դերակատարների միջև, ներառյալ պետական և ոչ պետական կառույցներ
- Բիզնես կարողությունների զարգացման **երկօրյա** դասընթացներ  ծրագրի թիրախ մարզերի շահառուների համար

- Կարողությունների զարգացման **2-օրյա** միջոցառում ծրագրի թիրախ մարզերի շահառու խմբերի անձանց համար

- **5** երկխոսության միջոցառում՝ գենդերային հավասարության, սոցիալական ներառման, սոցիալական քաղաքականությունների, էթնիկ փոքրամասնությունների խնդիրների վերաբերյալ **11** սեսիաներով՝ տեղական փորձը ներդնելու Հայաստանի գենդերային ռազմավարությունը ձևավորելու մեջ
- **1 2-օրյա** դասընթաց **12** մասնակցի համար՝ գենդերային հարցերի մարտահրավերների, էթիկական ստանդարտների և սոցմեդիա մշտադիտարկման գործնական հմտությունների շուրջ

# Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ

- **11** երկխոսության տեղական միջոցառում **344** մասնակցով՝ համայնքների, ՏԻՄ-երի, ՔՀԿ-ների ներկայացուցիչներ և այլ շահակիցներ
- Այս միջոցառումների արդյունքները ամբողջացնելով քաղաքականության փաստաթղթերի ձևով՝ հետագա ջատագովության մեջ կիրառելու համար
- **6** քաղաքականության փաստաթուղթ, **10** տեղեկագիր և ջատագովության **10** միջոցառում՝ որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավման վերաբերյալ
- ՔՀԿ ֆորում՝ Հայաստանի **31** ՔՀԿ-ների հետ՝ նպաստելու 2024-2028 թթ. գենդերային հավասարության ռազմավարության բարելավմանը **31** առաջարկ ներառվել է վերջնական փաստաթղթի մեջ

- Կանանց առաջնորդած ջատագովության **4** միջոցառում՝ ընդգծելու կանանց դերը քաղաքական, սոցիալական, հանրային կառավարման և ՔՀԿ ոլորտներում որոշումների կայացման գործընթացում, ներառյալ՝ էթնիկ փոքրամասնությունները
- **2** ինտերակտիվ հոլովակ՝ Կանայք թվային աշխարհում խորագրի ներքո
- **5** մարդկային մուլտիմեդիա պատմություն՝ ընդգծելու կանանց առանցքային դերը որոշումների կայացման գործընթացում
- **1 2-օրյա** դասընթաց ՔՀԿ ներկայացուցիչների համար՝ գենդերային հավասարության վերաբերյալ

# Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիա

**25** մասնակիցներ՝ քաղաքական կուսակցություններից, ՔՀԿ-ներից և անհատներ ներգրավվել են ծրագրում:

# ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

www.oxygen.org.am

info@oxygenfund.am

Դավիթ Անհաղթ 23, #19,
Երևան, Հայաստան

+(374 11) 308808

Facebook

Instagram

X

Linkedin